ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 փետրվարի 2015, 9 – Լ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի օգոստոսի 2-ի ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի գործունեության և թեկնածուների ընտրության կարգի» 5-րդ կետի 1-ին և 6-րդ ենթակետերով, 23-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով նույն կարգի 13-րդ կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության մրցույթին մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ դիմած հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի լրիվության և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի 01.09.2014թ.-ի թիվ 1-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված պահանջներին համապատասխանության ստուգման արդյունքները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովը **որոշում է.**

1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների

ընտրության մրցույթին մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ դիմած հավակնորդներ Ստեփան Կարոյի Միքայելյանի, Արմեն Շուրայի Հարությունյանի, Ելիզավետա Ռեմիկի Դանիելյանի, Աստղիկ Ֆրունզեի Խառատյանի, Արայիկ Գառնիկի Ղազարյանի, Նելիկ Նիկողոսի Հարությունյանի, Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի, Լիզա Ռաֆիկի Գրիգորյանի, Էդուարդ Աշոտի Մկրտչյանի, Վահե Միշայի Գրիգորյանի, Լիանա Օնիկի Հակոբյանի, Աննա Ռազմիկի Մարգարյանի, Դավիթ Լևոնի Հակոբյանի, Արտյոմ Աշոտի Գեղամյանի՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ ներկայացրած փաստաթղթերը ճանաչել Որոշմամբ սահմանված բոլոր պահանջներին համապատասխանող:

2. Հայկանուշ Հայկազի Պարսամյանի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության մրցույթին մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ ներկայացրած փաստաթղթերը ճանաչել Որոշման 1-ին կետի 1.2. ենթակետով սահմանված պահանջներին չհամապատասխանող:

Հանձնաժողովի նիստը վարող Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ